

ԱԶՏԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE

1500 L.Ո. 7309. ՏԱՐԻ, ԹԻՒ 88 (20551) ԵՐԿՐԻՇԱԲԹԻ, 26 ՅՈՒՆԻՍ 2000 10 ԷՁ

ԻՐԱԲ ՊԻՏԻ ՎԵՐԱԲԱՆԱՅ Ա. Մ. ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԻՐ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆԸ

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԱՅՍՕՐ ԶՕՐ. ՊԱՇՇԱՐ ԱՍԱՏԸ ՆԱԽԱԳԱԸ ՊԻՏԻ ՆՇԱՆԱԿԷ

Սուրիոյ խորհրդարանը երէկ կայացուց ժողով մը, քննարկելու համար վօր. Պաշար Ասատը նախագահ նշանակելու հարցը:



Զօր. Պաշար Ասատ կը նախագահէ Պասս Կուսակցութեան շրջանային ղեկավարութեան ժողովին:

Ժողովին մտիկադիրները հաղորդեցին, որ 250 անդամ հաշուող խորհրդարանը յառաջացուցած է յատուկ յանձնախումբ մը, որուն մաս կը կազմեն բոլոր կուսակցութիւններուն եւ սեփական մարզի ներկայացուցիչները:

Պաշար Ասատ կը նախագահէ իշխող Պասս Կուսակցութեան շրջանային ղեկավարութեան նիստին՝ կարելու պաշտօններ վստահելէ ետք իր մտերմներուն: Շրջանային ղեկավարութեան մէջ գլխաւոր պաշտօնները Պաշար յանձնեց իրեն մտերմ

դունը պիտի կատարէ 15 Յուլիսին:

Այս անգործանին վեհաժողով մը կացութիւնը կրնայ աւելի սրել եւ ոչ թէ՛ ղեկավարութիւնները հարթել:

ԵԳԻՊՏՈՍ ՊԻՏԻ ՃԱՆՁՆԱՅ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԿԵՍԷ ՄՈՒՊՈՒՐԸ



Արաքսայե Կուսարաք:

ԳԱՀԻՐԷ, 25 (ՌՈՅԹԸՐԸ) - Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաք Կիրակի օր յայտարարեց, որ Գահիրէ ճանաչում պիտի տայ պաղեստինեան անկախ պետութեան, ինչ ալ ըլլան անոր հռչակման պարագաներն ու պայմանները:

Մուսարաք կը խօսէր Իսրայէլի նախագահ Էլզէր Ուզլագի հետ ունեցած տեսակցութեան մը աւարտին: Ուզլագի կարգի ճակատագրութեան մը համար Գահիրէ ժամանած էր Կիրակի օր:

Մամլոյ նախարար Ռեմաթ Կարապետեան, Մուսարաք թաւառեալ է, որ պաղեստինեալ Իսրայէլեան խաղաղութեան բանակցութիւնները ղեկավարելու հարցին են Երուսաղէմ, գաղթականները եւ սահմանները: Մուսարաք յոյս յայտնեց, որ բանակցող երկու կողմերը յաջողին եւ յաջող իրենց տարակարծութիւնները:

Խօսելով Սուրիա - Իսրայէլ գործընթացին մասին, Մուսարաք թաւառեալ է, որ Պաշար Ասատ պատրաստ է վերսկսել սեյու խաղաղութեան բանակցութիւններուն: Ան աւելցուց, որ Պաշարը շատ լաւ նախագահ մը պիտի ըլլայ:

Մուսարաք զրուստեց նաեւ Ուզլագի հետ, որ Յուլիս 10ին պիտի հրաժարի իր պաշտօնէն՝ նստաշրջանի աւարտին երեք տարի առաջ:

ԶԵԶԵՆ ԸՆԶԱՏՈՂԱԿԱՆՆԵՐՈՒ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱԻԱՐՏԱԾ Է

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԶՕՐ. ԹՐՈՇԵՒ

ՄՈՍԿՈՒԱ, 25 (ՌՈՅԹԸՐԸ) - Զեչենիոյ մէջ ռուսական ուժերու հրամանատար գործարար Կեմալ Թրոշեւ եւ չորջանի քաղաքային նոր կառավարիչը՝ ԱՏՄՆ Քատիրով, Կիրակի օր յայտարարեցին, թէ ռուսական բանակը յետ այսու ըմբոստ շրջանին մէջ սողային կամ հրետանի յարձակումներու պիտի չձեռնարկէ:

Ըստ «Ինթերֆաքս» լրատու գործակալութեան, Թրոշեւ եւ Քատիրով յայտնած են, թէ չեչեն անջատողականներու ղեկավարութեան աւարտած է, եւ թէ ներքին գործոց նախարարութեան ուժերը պիտի ստանան անջատողականներու ղեկավար մը վարչերու մէջ մնացած ըմբոստութեան վերջ տալու գործողութիւնը:

Կաշու ղառնայ: «Ասիկա երբ տեղի կ'ունենայ՝ մէկ ամսուան, կէս տարուան կամ մէկ տարուան ընթացքին, կարելու է ի վերջոյ Զեչենիան

ԱՊՂԻ ՎԵՐՋԻՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԱՐԴԻՒՆԱԿԵՏ ԷՐ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՆՆԵ ՅՈՎՀԱՆՆԻՍԵՆ

Սոսիալիստական ղեկավար Ալիեւի համաձայն, Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան անդամ երկիրներու նախագահներու վերջին վեհաժողովը աւելի արդիւնաւէտ էր քան նախորդը:

Մոսկուայէ վերադարձին նախագահ Ալիեւ յայտնեց, որ նիստը ծեւական բնուէր չունէր եւ անոր մասնակիցները «բաւականին ազատ եւ ինքնուրոյն ընկերակցութեամբ» կատարեցին: Ան ըսաւ, որ ներկայիս ԱՊՂԻ մասին քննադատութիւնները անցեալէն մնացած են եւ ծագած են յոյսեր. որոնց մեծամասնութիւնը իրագործելի է:

Անդրադառնալով Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի հետ իր հանդիպումին, Ալիեւ ըսեց, որ հանդիպումը «չափազանց կարեւոր է շատ արդիւնաւէտ

ԱԼԻԵՒ ՆԵՐՈՒՄ ԿԸ ՇՆՈՐՀԷ

Ա.գրպէյնանի նախագահ Հայտար Ալիեւ երէկ ներում շնորհեց 87 բանտարկեալներու, որոնց շարքին քաղաքական բանտարկեալներ, եւրոպական խորհուրդի Ա.գրպէյնանի անդամակցութեան հարցին քննարկումին նախօրեակին:

Թրոշեւ, չորջանի նախարար Կրոնիարեւելքը գտնուող Յենթորոյ չորջանին մէջ խօսելով, ըսած է, թէ բանակային բազմաթիւ միաւորներ իրենց խորիսները պիտի

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՄԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ

ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՄԱՅԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ

Ռուսական Պետական Տումայի պատուիրակութեան նախագահ Ալեքսանդր Չուեւ Երեւանի մէջ կայացած մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտարարեց, որ Տումայի «Միասնութիւն» իլըմբակցութիւնը շահագրգռուած է, որ Ռուսիոյ արտաքին քաղաքականութեան մէջ Հայաստան կարելու տեղ գրաւէ:

Տար. ք. էջ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՍՕԹԱԼԻ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ Է

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԱՆՆԵ ՅՈՎՀԱՆՆԻՍԵՆ

Արտաձեռնեան երկիրներու Հետ կապերու Միութեան (ԱՕԿՄ) օրակարգի մէջ, հանրութեան հետ հանդիպումի մը ընթացքին, Հայաստանի խորհրդարանի պաշտպանութեան, ներքին գործոց եւ ազգային ապահովութեան յանձնաժողովի նախագահ Վահան Յովհաննիսեան խօսքին քննադատեց արտաքին գործոց նախարարութիւնը եւ ըսաւ, որ անիկա կը գտնուի «ամօթայի վիճակի մէջ»:

Վահան Յովհաննիսեան ըսաւ, թէ ոչ մէկ նախարարութեան գործերը այդքան վատ չեն, որքան արտաքին գործոց նախարարութեան պարագային: «Շատ յաճախ մենք մեր արտաքին գործոց նախարարութիւնը կը դիտենք իրրեւ զիւնանապիտական ծառայութեան կեդրոն»:

Տար. ք. էջ 2

Kensington University - U.S.A. Offers Bachelors, Masters, Doctorate Degrees (BBA, BA, BSc/MBA, MA, MSc./Ph.D.) In: * Business Administration * Business Computers * Banking & Finance * Marketing & Management * Accountancy & Auditing * Computers Science * Economics * Hotel Management

ԱԼԻԵՒ ՆԵՐՈՒՄ ԿԸ ՇՆՈՐՀԷ Ա.գրպէյնանի նախագահ Հայտար Ալիեւ երէկ ներում շնորհեց 87 բանտարկեալներու, որոնց շարքին քաղաքական բանտարկեալներ, եւրոպական խորհուրդի Ա.գրպէյնանի անդամակցութեան հարցին քննարկումին նախօրեակին:

RENAULT L'été sera Cooool! PRIX FRACASSÉS QUANTITÉS LIMITÉES Bassoul Heneiné sal Et leurs agents agréés sur tout le territoire libanais

ԹՈՒՐԻՔԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՐԱՍԱՅԼԵՐՈՒ ՆԱԽԱՊԱՏՈՒԹԻՒՆ ԿՈՒ ՏԱՅ

ՊԵՐԼԻՆ, 25 (ՌՈՅԹԸՐԸ). - Թուրքիոյ կառավարութիւնը գերմանական հրասայլեր կը նախընտրէ, հաղորդեց գերմանական «Վէլթամ Սոնթաք» թերթը Կիրակի օր:

Անհկա ըսաւ, որ թրքական կառավարութիւնը հապար հրասայլերու գնման ծրագրի մը համար 7,1 միլիարտ տոլար յատկացուցած է եւ առաջարկներ կը սպասէ միջապային ընկերութիւններէ:

Ըստ թերթին, վարչապետ Կերհարտ Շրէտերի կառավարութիւնը Յուլիս 3ի իր նիստին պիտի քննարկէ հրասայլերու գծով պայմանագրութեան մը կանաչ լոյսը տալու հարցը:

Պայմանագրութիւնը առեւտրական յաղթանակ մը պիտի ըլլայ Մանչեսթըր ընկերութեան Բրաուն - Մաֆֆէյ Վէկման մասնաձեւերին համար, որ հրասայլերը պիտի հայտնուի: Սակայն որեւէ ապագային նախ պէտք է գերմանական կառավարութեան հաստատութիւնը ապահովէ, նկատի ունենալով, որ անհկա Անգարայի մարդկային իրաւանց մարզին գծով կասկածներ արտայայտած է:

Հրասայլերու հարցը նուրբ հարց է Շրէտերի կեդրոնի մասին կառավարական ընկերակցութեան համար: Անոր անդամ «կանաչները» կ'ընդդիմանան վաճառքին, ըսելով, որ հրասայլերը կրնան քիւրտ անջատողական պիտակներու դէմ գործածուիլ:

Կարգ մը «կանաչներ» անցեալ տարի սպառնացած էին այս հարցով հրաժարիլ կառավարութենէն, որովհետեւ Շրէտերը արտօնած էր Լէփըրտ տիպի մէկ հրասայլի դէպի Թուրքիա արտածուիլ՝ վայն փորձարկելու համար:

Ան ի վերջոյ խոստացած էր, որ որեւէ ապագային պիտի չընդունուի մինչեւ որ Թուրքիա իսկապէս բարեխառն ընդհանրապէս մարդկային իրաւանց իր մարզը:

Կառավարութեան մէկ բանբերը մերժեց թերթին տեղեկագրին մասին մեկնաբանութիւն կատարել, ըսելով, որ Դաշնակցային Ապահովութեան Խորհուրդին, որ նման հարցեր վճռող նախարարներու սեղմ խմբակ մըն է, ժողովներն ու օրակարգը գաղտնի են:

«ԼՂԲԼԵՐ» ՏԻՊԻ ՀՐԱՍԱՅԼԻՆ
ԱՐՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

ՌԻԱՏ - ՓԱՐԻՉ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

ՌԻԱՏ, 25 (ՌՈՅԹԸՐԸ). - Սկստական Արարիա եւ Ֆրանսա կը քննարկեն կարելիութիւնը միասնաբար արտադրելու «Լըքլէր» տիպի հրասայլը, հաղորդեց սկստական պաշտօնական լրատու գործակալութիւնը Կիրակի օր:

Գործակալութիւնը հաղորդեց, որ պաշտպանութեան նախարար Իշխան Սուլթան եւ անոր ֆրանսացի պաշտօնակիցը՝ Ալէն Ռիչար, Շարաթ օր տեսակցութիւն մը ունեցած են ժեմտային մէջ եւ թէ հանդիպումին աւարտին թղթակցներու խոսած են միացեալ ծրագրին հաւանականութեան մասին:

Ռիչար Սկստական Արարիա ժամանած էր Շարաթ օր հրասայլեր ծախելու առաջարկ ներկայացնելու համար սկստացիներուն: Սկստացի նախարարը ըսաւ, որ «Լըքլէր»-ի հարցը սկսած է ժամանակ մը ի վեր, եւ թէ Սկստական Արարիա 13 տարի ի վեր կը հետեւի անոր: Ան աւելցուց, որ սկստացի եթէր գինուարականներ Ֆրանսայի հետ կը գործակցին հրասայլը արդիականացնելու միջոցներուն մասին: Սուլթան աւելցուց, որ Սկստական Արարիա երկու ընտրանք կ'ուսուումնասիրէ. կամ հրասայլերը գնել եւ կամ միացեալ ծրագրով մը արտադրել գալն:

Ֆրանսա եւ Սկստական Արարիա տարիներէ ի վեր կ'արձարծեն «Լըքլէր» տիպի 355 հրասայլերու վաճառքի մը կարելիութիւնը:

ՓՈՒԹԻՆ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ՌՈՒՍԻՈՅ ԱԶԱՏ ՄԱՍՈՒԼԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին շաբաթակերպին խոստացած է երկրին մէջ ապառ լրատու աղբիւրները պահպանել, սակայն Ռուսիոյ միակնկալի պատկերասփիւռի կայանին սեփականատէրը՝ Վլադիմիր Կուսինսքի, որ անցեալ շաբաթ կարճ ժամանակով արգելափակուած էր, յայտնած է, թէ իշխանութիւնը անհամապատասխան կողմ արգելափակուած էր, յայտնած է, թէ իշխանութիւնը անհամապատասխան կողմ արգելափակուած էր, յայտնած է, թէ իշխանութիւնը անհամապատասխան կողմ արգելափակուած էր:

Պութին նաեւ գանձապահ է, թէ պետութիւնը սահմանափակ կողմ արգելափակուած էր, յայտնած է, թէ իշխանութիւնը անհամապատասխան կողմ արգելափակուած էր, յայտնած է, թէ իշխանութիւնը անհամապատասխան կողմ արգելափակուած էր:

Երկրորդ մեծագոյն քաղաքին՝ Ս. Փետերսպուրկի մէջ սեփականաշնորհման համաձայնութեան մը կապակցութեամբ:

Կուսինսքի Ուրբաթ օր դատախազներու հետ 2 ժամ անցուցած է, սակայն անոր փաստաբանները յայտնեցին, թէ ան մերժած է հետաքննութիւններուն գործակցիլ՝ ըսելով, որ հարցը վտանգաւոր էր իր համար:

Կուսինսքի կոչ ուղարկած է դատախազներուն, որ ջնջեն իրեն ճանաչող արգելող որոշումը. որպէսզի կարենայ Բրիտանիոյ մէջ իր ընտանիքին այցելել, սակայն դատախազները մերժած են ատաշարիլը:

Ռուսիա արգիլած է նաեւ անոր Քիւն մեկնելու, ներկայ գտնուելու համար Եւրոպայի իրրեայ ղեկավարներու՝ Հրեական Համաշխարհային Քոնկրէսի համագումարին, ուր ան խօսք պիտի անէր: Ան կը գլխաւորէ Ռուսիոյ Հրեական Քոնկրէսը եւ կը ներկայացնէ երկրին 800 հազար հրեաները: (ՌՈՅԹԸՐԸ)

Արտաքին գործոց նախարարութիւնը լրատուակօրէն վայրացած Կուսինսքիի հարցին գրաւած ուշադրութենէն, Մ. Նահանգներու Քոնկրէսը ամբաստանած է հարցը «երկարելու» յանցանքով՝ ընտրութեանց այս տարւան ընթացքին «քարոզչութեան խաղով» մը:

Մինչ Կուսինսքի, որուն լրատու աղբիւրները յաճախ քննադատուած են Կրեմլինը, Ուրբաթ օր դատախազները կը դիմագրաւէր. Փութին երկրին Ապահովութեան Խորհուրդին կը յայտնէր, թէ Ռուսիոյ մէջ ժողովրդավարութիւնը անտեսելի է անոնց ապառ մամուլի մը:

«Առանց հաւաքական լրատու աղբիւրներու ժողովրդավար ապառ ընկերութիւն գոյութիւն չի կրնար ունենալ», ըսած է Փութին բարձրաստիճան պաշտօնատէրերու, որոնք Կրեմլինի մէջ քննարկած են Ռուսիոյ տեղեկատուութեան ապահովութեան գաղտնաբերութիւնը:

Ապահովութեան Խորհուրդի քարտուղարը՝ Սերգէյ Իվանով, յայտնած է, թէ ժողովրդորդեցած է նշեալ գաղտնաբերութեան:

Թղթակցները եւ քաղաքական բազմաթիւ անձնաւորութիւններ, Մ. Նահանգներու մտավախութիւն արտայայտած են, թէ յետադիւրիային լրատու աղբիւրները կրնան սպառնալիքի տակ գտնուիլ՝ Կուսինսքիի դէմ արձակուած անցեալ շաբաթուան քանտարկութեան հրահանգէն ետք:

Ռուսիոյ եւ արտասահմանի մէջ անսահման արշաւ մը յանդէս տարած էր երեք օրուան մէջ՝ անոր ապառ արձակման:

Կուսինսքի վեղձարարութեամբ ամբաստանուած էր Ռուսիոյ

ԸՈՒԷՅԹ

ՔԱՐԻԻՂԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԶՏԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՊԱՅԹՈՒՄ ՄԸ ՉՈՐՍ ԶՈՂ ԿԸ ԽԼԷ



Չտարանը՝ պայտումէն ետք:

ԱՇՄԷՏԻ, 25 (ՌՈՅԹԸՐԸ). - Քուէյթի քարիւղի մեծագոյն գտարանին մէջ գորտեր պայտում մը տեղի ունեցաւ Կիրակի օր, արեւածագին՝ չորս գոհեր եւ 49 փրկարարներ պատճառելով: Քուէյթի քարիւղի պետական ընկերութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը մը յայտնեց, որ պայտումը խափանարարական արարքի մը արդիւնքն է: Յայտարարութիւնը կ'աւելցրէր, որ կազմի հոսք մը տեղի ունեցած է, պատճառելով պայտումն ու հողեհէր:

Փոխվարչապետ եւ արտաքին գործոց նախարար շէյխ Սապահ Ահմէտ Սապահ եւ քարիւղի նախարար շէյխ Սկուտ Նասիր Սապահ անմիջապէս այցելեցին արկածին վայրը: Շէյխ Սկուտ եւ քարիւղի մարզի բարձրաստիճանային պաշտօնատէրեր անցեալ շաբաթուան մէջ խիստ ոճով քննադատուած էին խորհրդարանին կողմէ, որովհետեւ երկու գոհեր արձակուած էին Շուսայայի քարիւղի գտարանին մէջ պատճառած արկածի մը պատճառով: Խորհրդարանը քննիչ յանձնարարութիւն մը նշանակած էր ստուգելու համար պատճառները:

Ահմէտի գտարանի ընդհանուր պատասխանատուն յայտնեց, որ գտարանը ամբողջութեամբ փակուած է: Ան աւելցուց, որ Շուսայայ եւ Մինա Ապտալլա գտարաններն ալ թեթեւ վնասներ ունեցած են, սակայն անոնք բաց կը մնան: Քուէյթի երեք գտարանները իրարու կապուած են:

Ահմէտի գտարանի այցելութեան աւարտին շէյխ Սկուտ ըսաւ, որ պայտումը որեւէ ձեւով չ'ազդեր Քուէյթի քարիւղի արտադրութեան վրայ: Ան աւելցուց, որ հոսմ քարիւղը պիտի փոխարինէ գտնուած քարիւղի արտադրութիւններուն արտածումը: Շէյխ Սկուտ ըսաւ նաեւ, որ Ահմէտի գտարանը բաւական ծանր վնասներու ենթարկուած է եւ թէ տակաւին յայտնի չէ, որ անհկա երբ պիտի վերականգնուի աշխատանքի:

ՀԱՄԱՌՈՒՄ Է ԷԼԻՍԻՍՏՅԻՆ ԲՈՐԷՍԻ ԷԼԵՏ
ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲՈՅՆԵՐՈՒՆ

ԱՊԱՅՈՎՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՊԵՏԵ Է ՊԱՅՊԱՆՈՒՄ

Կ'ԸՍԵ ՀԱՐԱԵՅԻՆ, ՔՈՐԷՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Հարաւային Քորէայի նախագահ Քիմ Տէյ - Ճոնկ, երկէջ Սէուլի մէջ քորէական պատերազմի սկսման 50րդ տարեդարձին առիթով խօսք աւելցնելով, յայտարարած է, թէ սակայն հակառակ համայնապար Հիւսիսային Քորէայի հետ հաշտութեան միտող քայլերուն:

Ան շեշտեց, որ մինչեւ երկու Քորէաներու վերամիացումը եւ մնացուած խաղաղութեան հաստատման իրապարտութիւնը, կարելի չէ ապահովութեան միջոցառումներ իրականացնել:

Քիմ Տէյ - Ճոնկ Յունիս 13ին 15 Հիւսիսային Քորէայի նախագահ Քիմ Ճոնկ - Իլի հետ պատմական վեհաժողով մը ունեցած էր, ինչ որ թափ տուած էր՝ քորէական թերակողմին վրայ յարուած ուժերը մեղմացնելու գծով յոյսերուն:

Մտեցնուած նոր միջոցառում արտացոլացնելով, երկու Քորէաները երկէջ քայլերու դիմած էին տարեդարձին գինուարական երեք շուկայ լուստարձակի տակ դնելու համար:

1950ին 53 քորէական պատերազմը 3 միլիոն գոհ (գինուարական քորէաները պատերազմական վիճակի մէջ կը մնան եւ տակաւին խաղաղութեան համաձայնագրի մը չ'ունենան):

Մ. Նահանգներ 37 հազար գինուարական կը պահեն Հար. Քորէայի մէջ:

Ըստ Հար. Քորէայի նախագահին, ամերիկեան ուժերը անհրաժեշտ պիտի ըլլան վերամիացումին ետք նոյնիսկ «Հիւսիսարեւելեան Ասիոյ մէջ ուժերու հաւասարակշռութիւնը պահպանելու համար»:

(ՌՈՅԹԸՐԸ)

15 ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԴՐԱՄ ԿԸ «ԼՈՒԱՅՈՒՒ»

Միջազգային յատուկ կազմակերպութիւն մը, որ դրամ «լուսլու» դէմ կը պայքարի, անցեալ շաբաթ 15 երկիրներու եւ շրջաններու ցանկ մը հրապարակած է, ըսելով, որ անոնց «թոյլ» օրէնքները ոճրագործներու կ'արտօնեն, որ աշխարհի տարածքին իրենց ոճիրները գաղտնի պահեն:

Կազմակերպութեան նախագահը՝ Ճիլ Կալվաօ (փոթորկալիցի), յայտնած է, թէ կազմակերպութեան անդամները ցանկին մաս կազմող երկիրներուն հետ պիտի գործակցին՝ անոնց օժանդակելու համար, որ իրենց օրէնսդրութիւնը բարելաւեն:

Կազմակերպութիւնը գոյնացուց այլ երկիրներ արթուն ըլլալու՝ Իսրայէլի, Լիբանանի, Ռուսիոյ, Պահամա կղզիներու, Զայման կղզիներու, Լիխթենշթայնի, Փանամայի, Ֆիլիպիններու, Ելեւզ կղզիներու եւ քանի մը այլ շրջաններու ելեւմտական հիմնարկներու հետ իրենց աշխատանքներուն ընթացքին:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ

ԵՐԿՈՒՇԱՐԹԻ ՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

- 6:30 - Բացում
- F** 6:35 - Բարի լոյս
- M** 7:00 - Հայկական եւ օտար մեղմ երգեր
- 8:00 - Օրուան յայտագիրի ընթերցում
- 8:15 - Տեղական մամուլի խորագիրներու ընթերցում
- 9** **8:30 - Հայերէն լուրեր**
- 8:40 - Օդերեւոյթ
- 7** 8:45 - Ինչ կ'ըսեն աստղերը
- 9:00 - Հայկական խառն երգեր
- 9:30 - Թոյլք
- M** 10:00 - Սակարան
- h** **10:30 - Արաբերէն լուրեր**
- Z** 10:45 - Արաբերէն երգեր

- ե** 11:30 - Հեղինակային
- 2** 12:00 - Շահանդուխտի հետ
- 12:15 - Կոմիտասեան երգեր
- 4** **12:30 - Հայերէն լուրեր**
- 1** 13:00 - Սակարան
- 2**
- 7** 13:10 - Ազգային յեղափոխական երգեր
- 2** **14:30 - Արաբերէն լուրեր**
- 15:00 - Արաբերէն յայտագիր

- 16:30 - Արաբերէն լուրեր**
- 2** 16:40 - Հանդիպում
- 4**
- 1** 18:00 - Տարարան
- 1** **18:30 - Հայերէն լուրեր**
- 1** 18:40 - Հայերէն լուրեր
- 9**
- 9** 20:30 - Ըստարանային երգեր
- 22:30 - Պատուեր
- 00:30 - Փակում

HAIGAZIAN UNIVERSITY
Faculty of Business Adm. & Economics
is now accepting applications for its
MBA Program

- * General MBA - Accounting & Finance - Management & Marketing.
- * Academically rigorous & Financially affordable.
- * The degree is accredited by the Lebanese Ministry of higher education.

We simply provide a better education

For information please contact : Haigazian University
Mexique Str. - Kantari - Beirut.Tel.: (01)349230/1 (01)353010/1
E-mail: admissions@haigazian.edu.lb
Web: www.haigazian.edu.lb

FRIGO ADAM **ATAMIAN BROS**
REFRIGERATION & AIR-CONDITIONNING SPARE PARTS AND EQUIPMENTS
TOSHIBA — MITSUBISHI — DAIYA
Լաւագոյն վաճառանհիշերով SPLIT SYSTEMS եր-ընտիրըններ
• Զանազան տեսակներ եւ չափեր
• Մեծաքանակ եւ փոքրաքանակ վաճառք • Վճարման դիւրութիւններ

NAHR STREET - HIGH ROAD - FACE CHURCH MAR MIKHAEL — TEL: 01/447897 - 562786 — P.O.BOX: 175539 - Beirut - Lebanon — Fax: 961-1-445316

ՌՌԻՄԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԻ

Յունիս 16ին Մոսկուայի մէջ տեղի ունեցաւ «Ռուսաստանը Դայերի Միութիւն» կազմակերպութեան հիմնդիր համագումարը, որ յայտնաբար լուներ ռուս պետական բարձրագոյն շրջանակներուն հովանաւորութիւնը: Ըամագումարը նախագահ ընտրեց գործարար Արա Աբրահամեանը, որուն հետ Գործար հարցազրոյց մը ունեցած է ռուսական «Նեզավիսիմայա Կազեթ» քերթը. ստորեւ կու տանք հարցազրոյցը, ամբողջութեամբ:

Նշելի է այս կազմակերպութեան ծնունդը իբրէ լուրջ նախաձեռնութիւն, որ կը մտրի Ռուսական Դաշնութեան մէջ ապրող աւելի քան 2 միլիոն հայերը համայնմբել իբրէ քաղաքական ուրոյն գործոճ, ռուսական տեղական քաղաքակցաճոճութեան, ինչպէս նաեւ Ռուսիա - Ըայաստան յարաբերութիւններուն ծիրին մէջ:

ԳՐՈՅՈՒՍ.- Ի՞նչը ձեզ ստիպեց նախաձեռնել հայկական համայնքների համառուսաստանեան համագումար. Ի՞նչպիսի՞ նպատակներ ունե՞ն համագումարի կազմակերպիչները.

ՊԱՏՄԻՍԱՆԸ.- Վերջին տարիներին մի քանի փորձ ձեռնարկուեց միաւորելու Ռուսաստանի հայերին. որոնց թիւը մեր երկրում արագօրէն աճում է: Ռուսաստանում վաղուց բնակւող հայերին գումարուեցին զգալի թուով գաղթականներ: Դրանք Գայաստանի աւերիչ երկրաշարժից տուժածներն են. Միջին Ասիայի. Ազրպէյճանի. Վրաստանի ազգամիջեան հակամարտութիւնների ու բախումների ցեղերը: Որոշ գնահատումներով, Ռուսաստանում հայերի թիւը հասնում է գրեթէ երկուուուկէ միլիոնի: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ այդ մարդիկ, յամենայնդէպ նրանցից շատերը, յայտնուեցին տնտեսական, ընկերային, մշակութաբազմակարճ սկզբունքօրէն նոր իրավիճակում: Այսօր գծուարութիւններ ունե՞ն ոչ միայն նորեկները, այլեւ Ռուսաստանում վաղուց ապրողներից շատերը. Խորհրդային Միութեան տրոհման հետեւանքով դրա տարածքում ազգային պետութիւնների կազմաւորումն որոշ երկակիութիւն ծնեց այն մարդկանց վիճակի մէջ, որոնք մի կողմից արարւում են հայրենիքում Ռուսաստանում, իսկ միւս կողմից պատմական հայրենիք ունե՞ն Ռուսաստանից դուրս: Եւ սա որոշակի լարւածութիւն է ստեղծում. գուճէ ոչ թէ կենցաղային մակարդակով, այլ հասարակական-քաղաքական ոլորտում: Այդ մարդիկ, որոնք ապաստան են գտել Ռուսաստանում են ձգտում են տեղաւորուել, օրբեւան, աշխատանք գտնել, լուրջ խնդիրների են բախւում տեղական իշխանութիւնների, պաշտօնեաների, իրաւապահ մարմինների աշխատակիցների հետ յարաբերութիւններում:

Ռուսաստանի հայ համայնքների առջեւ ծառայած տնտեսական, ընկերային, իրավական, մըշակութային խնդիրների լուծման անհրաժեշտութիւնն այսօր իրատակ է դարձնում Ռուսաստանի հայերի կազմակերպման գործը: Գայ համայնքները պէտք է սեփական ինքնութեան կազմաւորման, ազգային համայնքման փուլ անցնեն, ձեւակերպեն Ռուսաստանի պետութեան հանդէպ իրենց վերաբերումըը, գտնեն իրենց տեղը ռուսական նոր հասարակութեան շրջանակներում:

Գ.- Ռուսաստանի բոլոր հայկական համայնքների անունից հանդէս եկող կազմակերպութիւններ անցեալում էլ են ստեղծուել: Ի՞նչու հենց այժմ յատկապէս հրատապ դարձաւ համահայկական կազմակերպութեան հիմնումը.

Պ.- Իրօք, նման փորձեր նախկինում էլ են եղել, բայց, կարծում ենք, որ մի կողմից համայնքներ տնտեսապէս այնքան էլ ինքնուրույն չեն եղել, իսկ միւս կողմից ամբողջատիրութեան, քաղաքացիական հասարակութեան բացակայութեան պայմաններում չկային հասարակական ինքնակազմակերպման անհրաժեշտ աւանդոյթներ, որի հետեւեւնքով կազմակերպութիւնները չկարողացան իրենց շուրջ համայնմբել հայկական բոլոր համայնքները, ձեւակերպել բոլոր հայերի համար ընդհանուր խնդիրներ ու նպատակներ: ՏՅուեսական թուլութիւնն ու անջատուածութիւնը հայ համայնքներից բոյլ չտուեցին ստեղծել իրօք լուրջ, հեղինակաւոր համառուսաստանեան կազմակերպութիւն, որպիսիք կան, օրինակ, Միացեալ Նահանգներում. Յրաստայում, մի շարք արաբական երկրներում. որտեղ բաւական լաւ կազմակերպւած համայնքները պաշտպանում են հայերի շահերը, հետեւողականօրէն պահպանում ինքնօրինակութիւնը, լեզոււն, մշակոյթը, արդիւնաւետօրէն փոխգործակցում պետական կառոյցների հետ:

Եւ մէկ հանգամանք որը թերեւ փորձ-ինչ արգելապէլ է Ռուսաստանում հայերի ինքնակազմակերպման ընթացքը: Խորհրդային Միութեան գոյութեան ժամանակաշրջանում նախ Խորհրդրդային Գայաստանում յաջողում էր բաւական լաւ լուծել ազգային մշակոյթի, լեզուի, ինքնօրինականութեան պահպանման հարցերը, ապա Խորհրդրդային Ռուսաստանի տարածքում փաստօրէն բաւական հեշտութեամբ մերուում էին ռուսական լեզւամշակութային միջավայրին, հայ ժողովրդի ներկայացուցիչները բարձր արդիւնքների էին հասնում գիտութեան, մշակոյթի մէջ, քաղաքական գեյանքում, վարչական աշխատանքում: Խորհրդրդային Ռուսաստանում հայերն իրենց գգուն էին «խրայիցներ»:

Խորհրդային Միութեան փլուզմանը յաջորդած տարիներին տեղի ունեցան մշակակալի փոփոխութիւններ: Մի կողմից, ռուսական միջավայրն սկսեց իրեն գիտակցել ազգային հիմքի վրայ, ըստ որում այդ գործընթացը զգալիօրէն արագացում է քաղաքական գործիչների եւ *չինով-ճիկների* կողմից: Միւս կողմից, նոյնիսկ բաւական լաւ մերուած Ռուսաստանի այլազգի քաղաքացիներն սկսեցին գիտակցել իրենց ազգային իւրայատկութիւնը, որը որոշակի ինքնասահմանափակում է պահանջում բարեկեցիկ կեանքով ապրելու, սեփական անձի եւ գաւակների ինքնադրուելուժման հնարաւորութիւնները երաշխաւորելու համար:

Գ.- Ո՞վ նախաձեռնեց համագումարը, ինչպիսի՞ն է կազմակերպիչ կոմիտէի անհատական կազմը.

Պ.- ՆԱխաձեռնող խմբի մէջ էին յայտնի քաղաքական ու հասարակական գործիչներ, գիտնականներ, գործարարներ, մշակոյթի գործիչներ: Մասնաւորապէս մեր կազմակալիչ կոմիտէի անդամներ են Ռուսաստանի Պետական Տուժայի փոխ նախագահ Արթուր Չիլինկարովը, քաղաքագետ

Անդրանիկ Միիրանեանը, ակադեմիկոսներ Սամուէլ Գրիգորեանը եւ Գեորի Աղայեանը, Տիրան արքեպիսկոպոսը եւ Սփիւռքի այլնշանաւոր ներկայացուցիչներ: Ի հարկէ, հայ համայնքի ակտիւը չի սահմանափակւում կազմակերպիչ կոմիտէի շրջանակներով: Գամայնքի կեանքին անմիջպականօրէն մասնակցում են սիրուած դերասան Արմէն Ջիգարիսեանը, հիանալի նկարիչ Ռուտով՛՛ Խայատրեանը, ակադեմիկոսներ Միտարեանը, Աղանբեգեանը, յայտնի բժիշկներ, երաժիշտներ, Ռուսաստանի գիտութեան ու մշակոյթի նշանաւոր գործիչներ:

Գ.- Որո՞նք են համագումարի կազմակերպական սկզբունքները: Ի՞նչ էր կարծում, շրջանային կազմակերպութիւնները կը պաշտպանե՞ն ձեր նախաձեռնութիւնը.

Պ.- Գաշուի առնելով անցեալի փորձը եւ համառուստանեան կազմակերպութեան ստեղծման ձախողումները, մենք որոշեցինք այս անգամ իրաժարուել միաւորման ուղղահայեաց սկզբունքից: Անցեալում ի՞նչպէս էին ստեղծում մման կազմակերպութիւնները: Նախ ստեղծոււմ էր մակրովեան ազգային խումբը, իրեն յայտարարելով համառուսաստանեան միութիւն կամ ընկերակցութիւն, ապա ջանում էին այդ կառոյցի մէջ միաւորել շրջանային համայնքներին: Մենք ընտրեցինք ուրիշ սկզբունք: Կէս տարուց աւելի կազմակերպական աշխատանք էր կատարւում համառուսաստանեան համայնքների գումարման նպատակով, որն իրօք կը ներկայացնէր Ռուսաստանի հայ համայնքները:

Կազմակերպիչ կոմիտէ ներկայացուցիչները մի շարք ուղեւորութիւններ կատարեցին այն շըրջաններում, որտեղ կան բազմաճաճ, կազմակերպւած եւ արդիւնաւետ գործող հայ համայնքներ: Մասնաւորապէս, համագումարի նախօրէին Արթուր Չիլինկարովը մեկնեց Ատարախան եւ հանդիպեց Ռուսաստանի հարաւեւ հայ համայնքների ներկայացուցիչների հետ: Ի դէպ, Ատարախանի հայ համայնքը Ռուսաստանում հնագոյններից մէկն է. ձեւաւորուել է 17րդ դարի վերջերին: Կազմակերպիչ կոմիտէի մի խումբ ներկայացուցիչներ վերջերս եղան Ս. Փեթրսպուրկում: Այդ քաղաքում հայերի ինքնակազմակերպման աւանդոյթները դեռ նախայնգափոխական շրջանից են:

Չիանալի կազմակերպուած հայ համայնքը համախմբուել է Փեթրսպուրկի հայկական եկեղեցու իոգեպետ իովովի շուրքը: Այժմեղ գործում են ազգային դպրոց, մշակութային եւ լուսաւորչական կենտրոններ, վերականգնուած է Նեսկի պողոտայի գեղեցիկ հայկական եկեղեցին, ամենամօտ ժամանակներս սպասւում է դրա բացումը: Առանձնապէս հաճելի տպաւորութիւն գործեց այն փաստը, որ Քարեկանութեան Տանը կայացած հանդիպման ժամանակ հայ համայնքի ներկայացուցիչները շատ ջերմօրէն, երախտագիտութեամբ խօսեցին քաղաքային իշխանութիւնների օժանդակութեան մասին: Մեզ թոււմ է, որ դա համայնքի եւ իշխանութիւնների արդիւնաւետ դիսգործողութեան ամենայաջող օրինակներից մէկն է:

Այս շարքա կազմակերպիչ կոմիտէի մի խումբ անդամների հետ այցեւեցինք Տոնի Ռոստով եւ հանդիպում ունեցանք առաւել կազմակերպումաւ ու աշխուժ համայնքներից մէկի ներկայացուցիչների հետ: Գայերն արդէն մի քանի հարիւրամեակ ապրում են Նոր Նախիջեւանում: Դեռ 18րդ դարի երկրորդ կէսին Սուվորովը Եկատերինա Չի իրաձնեով խրիմսահայերին դուրս բերեց, Խրիմի խանութեան տնտեսական գորութիւնը թուլացնելու նպատակով, հայերն ու յոյները Խրիմում գլխարկեցին: Իրատեղաւորներն էին: Տոնի փախերի խրիմահայերը հիմնեցին Նոր Նախիջեւանն ու Չալթըը, որոնք ներկայումս Ռոստովի մարզի բարգաւաճ շրջաններից են:

Ռոստովից մենք մեկնեցինք Քրասնոտարի երկրամաս: Տարբեր գնահատումների համաձայն, այնտեղ ապրում են 600-800 հազար հայեր, որոնք երկրամասում թուականով երկրորդ ազգային խումբն են: Այն բանից, թէ նրանք որքանով կը մերուեն Կուբանի հասարակական-քաղաքական, տնտեսական, ընկերային, մշակութային կեանքին, կախուած են այդ շրջանի խաղաղութիւնն ու կայունութիւնը: Մենք գիտենք, որ որոշակի բարդութիւններ կան Քրասնոտարի երկրամասի դեմաբնութեան եւ հայ համայնքի յարաբերութիւններում: Արդէն Մոսկուա են հասնում կշտամբանքներ ու բողոքներ նահանգապետ Նիքոլայ Քոնտուրպեմոյի եւ երկրամասային վարչակազմի հասցեին: Երկրամասի հայ համայնքների ներկայացուցիչները հետ կայացած հանդիպումները հաստատեցին հայ համայնքի եւ տեղակաւ իշխանութիւնների յարաբերութիւններում լուրջ լարոււածութեան առկայութիւնը: Երկրամասային իշխանութիւնների ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպման ընթացքում քննարկուեցին որոշ հայ համայնքների եւ կազմակերպի միջեւ օտարացման, քջմանքի յաղթահարման ուղիները: Կարծում են, որ այդ ուղեւորութիւնները շատ օգտակար են:

Գ.- Որո՞նք են կազմակերպութեան ծրագրային գործունեութեան գլխաւոր ուղղութիւնները, ինչո՞վ է զբաղւողու ռառջին հերթին:

Պ.- Ամենագլխաւոր խնդիրն արդիւնաւետ կազմակերպական կառոյցների ստեղծումն է: Այս կամ այն խնդրի շուրջը հայ համայնքների համախմբման ենթակառոյցը պէտք է աչքի ընկնի արդիւնաւետութեամբ: Ի հարկէ, դա կը պահանջի որոշակի ծախսեր: Ըստ կարելու է, որ համայնքների ղեկավարները ձեռքները չպարզեն պետութիւնից կամ գործարարներից դրան խնդրելով կազմակերպական միջոցառումների համար: Ենթադրւում է ստեղծել ձեռնարկչական գործունեութեան այմպիսի ձեւ, որն ինքմին կը կարողանար «սնել» անհրաժեշտ կազմակերպական կառոյցը: Գակառակ դէպքում դժուար է պատկերացնել համահայկական կազմակերպութեան ապագան:

ԱՇուշտ, անկիւնաքար կը դառնայ բոլոր ազգային համայնքների համար անանրական դարձած ազգային ինքնօրինակութեան, մշակոյթի, լեզուի պահպանման հարցը: Դա ազգային հանրակրթական եւ կիրառելորեայ օժտում աշխատների դպրոցների կազմակերպումն է, ազգային համոյթների խրախուսումը, հաղորդակցումն ազգային լեզուին ու մշակոյթին:

Լուրջ աշխատանք է ենթադրւում ընկերային -

տնտեսական ոլորտում: Մենք մտադիր ենք ուսումնասիրել շրջանների հայ համայնքների կառուցուածքը, ձեռնարկչական գործունեութեան մէջ դրանց ներգրաւման աստիճանը, աշխատանքի միւս ոլորտները: Անհրաժեշտութեան դէպքում կը քննարկուեն աշխատատեղերի ստեղծման նպատակային ծրագրեր:

Գործունեութեան կարեւորագոյն ոլորտներից մէկը կը դառնայ հայերի քաղաքացիական եւ ազգային իրաւունքների պաշտպանութիւնը: Մենք ենթադրում ենք կազմակերպել ըստ ազգային յատկանիշի գոյութիւն ունեցող խնդիրների եւ իրաւախախտումների ամճնօրեայ վերահսկում: Քաղաքացիական իրաւունքների պաշտպանութեան գործում համադաշնային կազմակերպութիւնը կարող է յատկապէս կարելոր նշանակութիւն ունեցալ, քանի որ տեղերում համայնքները կարող են անբաւարար ուժեր ունեցալ շրջանային իշխանութիւնների վրայ ազդելու համար: Ռուսաստանի բազմաթիւ շրջաններում մենք բախւում ենք նոր աւատաւորական յարաբերութիւնների, տեղական իշխանութիւնները տեղադի սակաւակտների հետ դառնում են անսահմանափակ ուժ, հասարակական կազմակերպութիւններն ու զանգուածային լրատումիջոցները ճնշւում են, դժուար է դատաստան տեսնել ազգային փորցաւանութիւնների իրաւունքները խախտողների նկատմամբ: Այս պայմաններում համառուսաստանեան կազմակերպութիւնը կարող է դաշնային մակարդակով կենտրոնական իշխանութիւնների, զանգուածային լրատումիջոցների, հասարակական հաստատութիւնների միջոցով գտնել այն խնդիրների լուծումը, որոնք անլուծելի են տեղերում:

Կարծում են, որ համառուսաստանեան կազմակերպութիւնը կ'իւրացնի նաեւ գործունեութեան նոր ձեւը իշխանութեան դաշնային եւ տեղական մարմինների ընտրութիւններում հայ համայնքների քաղաքական համախմբման աշխատանքը:

Ռուսաստանի համայնքային միաւորումների համար այդ բնագաւառը միանգամայն նոր է, թէւ Ամերիկայի, Ֆրանսիայի, ուրիշ երկրների հայկական համայնքները վաղուց են բաւական արդիւնաւետ իւրացրել են քաղաքական աշխատանքը: Մեր կազմակերպութիւնը կարող է կարելոր դեր խաղալ հայ համայնքի քաղաքական լուսաւորման մէջ, որպէսզի հայերը առաւել իմաստաւորւած եւ գիտակցուած ընտրութիւն կատարեն թեկնածուների կան ընտրական դաշինքների պաշտպանութեան հարցում: Լաւ կը լինէր արձանագրել քաղաքական ուժերի եւ համայնքների փոխադարձ պարտաւորութիւնները, ինչպէս դա արւում է բազմաթիւ զարգացած երկրներում. քաղաքական ուժերը որոշակի պարտաւորութիւններ են ստանձնում ընտրողների թուէների դիմաց: Ի հարկէ, դա բարդ էր տեսական գործընթաց է, բայց եթէ մենք թեւակոխել էնք ժողովրդավարական ինքնակազմակերպման ուղին, ապա անհրաժեշտ է

Ջաւախք, Հայրենակցական միութեան եւ Հայաստանի կրթութեան ու գիտութեան նախարարութեան սփուռեթի բաժնի յանձնարարութեամբ Փետրուար - Ապրիլ ամիսներին եղայ Ախպլթաւքում:

ԱՄՌԻ ՅԵՆԱՄԻԻՆԵՐՆ ԵՆ ԴԱՏՌԻՄ ԱՌԱՏԱԳԸ

Ջաւախք Հայրենակցական միութեան եւ Հայաստանի կրթութեան ու գիտութեան նախարարութեան սփուռեթի բաժնի յանձնարարութեամբ Փետրուար - Ապրիլ ամիսներին եղայ Ախպլթաւքում:

Ամենացաւուտ խնդիրներից մէկը Ջաւախքում ուսուցչական քատրերի վիճակն է: Այստեղ որոշ աւարկաների մասնագէտներ ընդհանրապէս չկան: Ցատկապէս ծանր է Պարս գիւղի դպրոցի վիճակը, որտեղ մասնագէտ մանկավարժներից գատ ուսուցիչ են աշխատում նաեւ մանկավարժուէիւնից հետո մարդիկ:

Մասնագէտների պակասի պատճառով բարձրագոյն կրթութեան ունեցող կամ նոյնիսկ չուււնեցող որոշ ուսուցիչները յանձնարարում է զատանւել մի քանի աւարկան: Համապատելով նոյնիսկ մարդկային եւ ճշգրիտ աւարկաները:

Դպրոցներում պարապմունքները յաճախ դադարեցւում են աշխատավարձ չլինելու պատճառով: Այս առումով վիճակը, շնորհիւ գիւղի ղեկավարների, համեմատաբար բարւոք է Ալաւտաւնում ու խանտուտ: Ընդհանուր աւումար, 18-20 ամիս է, ինչ ուսուցիչներին աշխատավարձ չի տրուել: Մինչեւ Փետրուարի 15ը ոչ մի դպրոցում պարապմունքներ չեն եղել, իսկ Սիսանիկեան, Պոպոլ, Նաւէթ գիւղերում դպրոցները չեն գործել Դեկտեմբերի 20ը չուււնեւ գրակառութեան, 20ր՝ հայրձեյ Արեւիկայի 20ը մինչեւ Ապրիլի կէսերը: Նոյն վիճակն է նաեւ Տատիշ, Սուլտա, Ջաբ, Ումպուրտա գիւղերում: Ուսուցիչների բողոքներին ոչ ոք ուշադրութիւն չի դարձնում:

Լուրջ է նաեւ դասագրքերի խնդիրը: Այսպէս՝ Ալաւտան, Քուպրա, Վարեւան գիւղերի որդ դասարաններում ընդհանուր թիւով սովորում է 38՝ աշակերտ, որից 20ը չուււնեւ գրակառութեան, 20ր՝ հայոց լեզուի, 32ը՝ կենսաբանութեան, 10ը՝ հին աշխարհի պատմութեան եւ այլ դասագրքեր: Չկան քիմիագիտութեան դասագրքեր, իսկ հայ ժողովրդի պատմութեան դասագրքերը հատուկենտ են: Վիճակը նոյնն է նաեւ միւս դասարաններում եւ, ընդհանրապէս, Ախալքալաքի բոլոր դպրոցներում:

Ի դէպ, «Հայ ժողովրդի պատմութեան» աւարկայի համար ուսումնական ծրագրով նախատեսւում է մէկական նիւթի դասաժամ միայն, սակայն որոշ դպրոցներում դա էլ չի դասաւանդուում դասագրքեր կամ մասնագէտներ չլինելու պատճառով: Ընդհանրապէս, նաեւ ուսուցողական նիւթերի, քարտկաների, շեմաների, ծրագրերի, մեթոտական ձեռնարկների, թելադրութիւնների ու փոխադրութիւնների ժողովածուներին, աւարկայական նիւթերի եւ դպրութեանը վերաբերող ամէն ինչի սուր կարիք կայ:

Ամսխիթար է նաեւ դպրոցական գօթի եւ շէնքերի վիճակը: Գրեթէ բոլոր դպրոցներում քարոտուած են սեղան-նստարանները, աթուռները, պատուհանների ապակիները: Դպրոցները չուււ-

իրացնել նաեւ այդ փորձը:

Գ - Գամահայկական միութիւնն ինչպիսի՞ դեր կարող է խաղալ Ռուսաստանում ազգամիջեան յարաբերութիւնների կայունացման ողորտում:

Պ.- Գործունեութեան անսպառ ասպարէզ կայ Ռուսաստանի տարբեր ազգերը, ժողովուրդները, համայնքները ներկայացնող կազմակերպութիւնների յարաբերութիւնների բարելաւման համար: Կարծում են, որ անհրաժեշտ են Ռուսաստանի համայնքների ղեկավարների անմիջական, հորիզոնական կապերը, որոնց հիման վրայ հետագայում կարելի է ստեղծել առաւել արդիւնաւետ ազգամիջեան կազմակերպութիւն հաւանաբար, ազգային համայնքների համակարգիչ խորիւրդ:

Մեր կազմակերպութեան գործունեութեան զըլխաւոր ուղղութիւններից մէկը կը լինի միւս ազգային կազմակերպութիւնների հետ կապերի հաստատումն ու խորացումը ի շահ ազգամիջեան հաշտութեան ու համաձայնութեան, Ռուսաստանի միասնական մշակութային տարածքին մեր բազմաթիւ ազգային խմբերի արդիւնաւետ մասնակցութեան:

Գ.- Միութիւնը, առիասարակ Ռուսաստանի հայ համայնքն ինչպիսի՞ դեր կարող են խաղալ ռուս-հայկական յարաբերութիւնների զարգացման մէջ.

Պ.- Մենք գտնում ենք, որ աշխարհում սփռւած բազմաթիւ հայ համայնքների մէջ Ռուսաստանիը «գլխաւոր համայնքն» է: Նա ամենազըլխաւորն է շատ առ

գրականություն և մշակույթ

ՔԱՆԴԱԿԱՅԻՆ...

Իր տեսակին մեջ բարձրորակ քանդակի ցուցահանդեսի մը բացումը տեղի ունեցավ Յ Յուհիսի երեկոյեան ժամը 7:30-ին, Անգլո-Տաղեր ցուցասրահին մեջ (Շրմսէլզի) «Կանգնակալին» ընդհանուր խորագրին տակ:

Իւրաքանչիւրը տասական քանդակներով ցուցահանդեսին կը մասնակցէին երկու սերունդի ներկայացուցիչ չորս քանդակագործներ. Սալուա Թաուտա Ծուբէլը, Ջաւէն Խտրըշեան, Նալիմ Տուսիթ և Անթուան Պերպէրի: Այս քանդակագործներէն իւրաքանչիւրը առանձին անհատականութիւն մըն է և ունի իր սեփական ոճն ու արտայայտչամեթոդը:

Ա. ՍԱԼՈՒԱ ՌԱՌՏԱ ՇՈՒԷՅՐ

Ի իբրևանի քանդակային արուեստի երէց սերունդի կարկառուն դէմքերէն կը



«Ցայտադիր», գործ՝ Սալուա Ռաուտա Շուբէրի

համարուի այս քանդակագործուհին: Ան կը համարուի յառաջապահ մը այն արուեստագէտներուն մէջ, որոնք տեսական որոնումներու ընդմէջէն անընդհատ կը վերանորոգեն իրենց արուեստը: Անոր յղացքները «գիտեր» են յաճախ, որոնք հիացնելու զուգահեռ, կը միտին զարմացնել նաեւ ակնդիրը: Այս հնարամիտ քանդակագործուհին քանդակները յաճախ մէկէ աւելի կտորներէ կը բաղկանան և կարելի է զանոնք տարբեր ձեւերով դաստարել: Այսպիսով արուեստագիտուհին առիթ կու տայ արուեստաւորին իր ցանկացած ձեւով համարել քանդակները: Այսպիսով, արուեստասէրը կը մասնակցի ստեղծագործական գործընթացին և քանդակի կտորները կը շարժ համաձայն միջազային ու իր ցանկութեան:

Տարբեր տեսակի փայտ և մետաղ օգտագործելով՝ Սալուա Թաուտա Ծուբէլը կը կերտէ այնպիսի վերացարկուած ձեւեր, որոնք սարմարում մը են կամ յոյզ մը արտայայտելէ այն կողմ կ'անցնին և խթանելէ ետք սեր հետաքրքրութիւնը թափ կու տան նաեւ մեր երեւակայութեան:

Բ. ՉԱՒԵՆ ԽՏՁԵԱՆ

Ջաւէն Խտրըշեանի անունը քաջ յայտ-



«Աղօթք», գործ՝ Ջաւէն Խտրըշեանի

նի է մեր ընթերցողներուն: Յայտնի է նաեւ, որ անոր գործերը ունին կորողային բնույթ և վեհ զգացումներ կը յառաջացնեն ակնդիրին մէջ: Անոր անընդհատ դէպի բարձրերը ձգտելու և տիե-

զերական ոլորտներ սաւառնելու ձգտումը զինք կը մղեն դէպի նորանոր որոնումներ ու շարունակական բիրտղացում:

Ջաւէն Խտրըշեան քանդակային արուեստի մէջ ինքզինք հաստատած ուրոյն անհատականութիւն մըն է:

Գ. ՆԱՅԻՍ ՏՈՒՄԻՑ

Ինաստեղծական խառնուածքի տէր (ոչ անպայման քնարական) այս քանդակագործը հակամէտ է կերտելու կին կերպարներ, որոնք ոչ միայն մայր են ու էգ, այլ նաեւ կ'արտայայտեն տարբեր



«Շղարշապատ կինը», գործ՝ Նայիմ Տումիթի:

տեսակի մարդկայնական վիճակներ: Անոր կերտած կերպարներուն բանաստեղծականութիւնը ոչ թէ անոնց ձեւորմանումն միջոցով կ'արտայայտուի, այլ կ'եցնուածքներուն:

Եթէ Նայիմ Տումիթ թեմալի և կերպարի առումներով իր ստեղծագործական ճանապարհը ճշգրտ կը թուի ըլլալ, ապա ոճային առումով ան բեղմնաւոր այնպիսի պրպտումներու մէջ է, որոնք զինք կ'առաջնորդեն դէպի առաւել ինքնատարութիւն: Ան մարդու հոգեկան աշխարհը պնդելու և որսնորելու ստեղծագործական ընթացքի մը մէջ է:

Դ. ԱՆԹՈՒԱՆ ՊԵՐՊԵՐԻ

Նորարարական հակումներով և արտակերտ յղացքներով ստեղծագործական հրապարակի իջնելէ ետք, ան ժամանակի ընթացքին կերտեց քանդակային արուեստ մը, ուր մետաղի թելադրականութիւնը իր արժանի տեղը ունի: «Թաւ-



«Պարուհին», գործ՝ Անթուան Պերպէրիի

ջութակահարը», «Պարուհին» են այլ կերպարներ առանձին խառնուածք և կամ մերթն ուժակաւորութիւն ունեցող տիպարներ են, որոնք մէկ կողմէ կը բխին իր ներաշխարհէն և, միւս կողմէ իրեն առանձին անհատականութիւն մաս կը կազմեն առհասարակ մարդկային հասարակութեան:

Անթուան Պերպէրիի ստեղծագործական գործընթացին մէջ երեւակայութիւնն ու անոր համապատասխան արհեստագիտութիւնը զուգահեռ կ'ընթանան և կը պայմանաւորեն անոր կերպարներուն խառնուածքը, որոնք կենսունակ կու գան ու կը բաշխուին մարդկայնական տարածքներու վրայ:

ԽՕՍՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼՍՈՂՈՒԹԻՒՆԸ

Յայտնի գիտնական տիեզերագետ Գրիգոր Գուրզադեան գեղանկարիչ է գրող է միաժամանակ: Ան պարբերաբար հայրենի մամուլին մէջ կը ստորագրէ նաեւ գրականագիտական և արուեստաբանական յօդուածներ, որոնց ընթացքին կը կատարէ դիպուկ մատնանշումներ ու վերլուծութիւններ:

Ստորեւ տրուած ակնարկը առնուած է ծաւալուն յօդուած մը: Հոս Գուրզադեան կը կատարէ հետաքրքրական խորհրդածութիւններ բանաստեղծութեան և խօսքի կշռոյթի ու երաժշտականութեան շուրջ:

Պայմանական լեզուի ներքին պահանջը յատուկ է բոլորին, դա կենսաբանական պահանջ է, այն կապուած է մարդու անհատական յատկութիւնների հետ կրթութեան, դաստիարակութեան, մասնագիտութեան, գեղամուտի տեսակի, հրապուրանքների և նման այլ բաների: Այդ յատկութիւններից ամեն մէկը կարող է ուժեղացնել կազմակերպել կամ աւելի ներգործուն դարձնել պայմանական լեզուի աշխարհուն իրենց արարելու ձեւը: Աւելի համեստ ներքնաշխարհի տր մարդու մէջ, օրինակ, պայմանական լեզուի հասկացողութիւնը և այդ լեզուով արարելու կերպը, ի հարկէ, այլ է, բայց եթէ անգամ լինի դա այն մակարդակով, ինչ կոչուում է պրիմիտիվ: միեւնոյն է, էութիւնը դրանից չի փոխուում այդ կառուցումածքի տր մարդու անգամ կարօտ է պայմանական լեզուի: Կարճ տարբերութիւն չոպանի և ակադեմիկոսի միջեւ չկայ, երկուսն էլ ունեն իրենց ներքնաշխարհը և պայմանական, վերացական լեզուով արտայայտուելու պահանջը:

Բայց բանաստեղծութիւնը խոցելի է, ոչ յաջող, անճաշակ պարզապէս վատ երաժշտութիւնն ի վերջոյ լսուում է, հանդուրժուում, իսկ ոչ յաջող բանաստեղծութիւնը կարող է մինչեւ վերջ, որպէս կանոն, չի ստացուում: Բանաստեղծութիւնը խոցելի է, այն, էլ երկու կողմից: Մէկը վերաբերում է ասելիքին, երբ սկզբից եւեթ պարզ է դառնում ասելիքի բացակայութիւնը և որ մնացածը միայն ձեւ է ձեւակերպ, կշռոյթ, ու ակամայ անցնում են յաջողոր էջերին առանց շարունակելու կարողալը: Խօսքը չի վերաբերում այն դէպքին, երբ ասելիքը նստած է խորքում, շատ խորքում, նոյնիսկ քողարկուած տեսակ-տեսակ միջոցներով, եւ որին դեռ պէտք է հասնել, Ռիլկեն, օրինակ: Բանաստեղծութիւնը այս տեսակը ամենից բարդն է, ամենից դժուարը, դա շատ քչերին է յաջողուում:

Բանաստեղծութիւնը միւս խոցելի կողմը վերաբերում է ձեւին հանգը, կշռոյթը, բանաստեղծութիւնը այս խիստ անհրաժեշտ միջոցներն ու ձեւերը, պարզուում է, հեշտ է չարաշահել ինքնանպատակ դառնալու աստիճան: Դա էլ ստեղծում է այդ պատրանքը, բանաստեղծութիւնը գրելու դժուար չէ, ամեն գիւղ չունի իր աշուղը, բայց ունի իր բանաստեղծը ոտանաւոր գրողը, այն էլ մի քանիսը...

Բանաստեղծութիւնը ունի եւս մի խոցելի տեղ, խօսքը բանաստեղծութիւնը թարգմանութեան մասին է. այս հարցում երաժշտութիւնը կերպարուեստի հետ միասին երջանիկ բացառութիւն է կազմում թարգմանութեան խնդիրը չկայ: Բանաստեղծութիւնը բանաստեղծութիւն է արդէն իր ծննդով և այդ ծննդով էլ ստեղծում է բանաստեղծական հնչեղութիւնը, կշռոյթը. ներքին ներդաշնակութիւնը իր երաժշտութիւնը: Ամենաբարեկից թարգմանութիւնը անգամ անկողնուում է նոյնիսկ հետաւոր չափով փոխանցել մի այլ լեզու ողջ հմայքն ու բուրմուկը, ուժն ու իմաստը բնօրինակի դա չլինելու բան է: Ես շատերի ման վատ գիտեմ արեւմտեան բանաստեղծութիւնը, եւ դա միայն լեզուի պատճառով թարգմանութիւնն ինչ էլ յուզում, իսկ միայն իմաստը հասկանալը չի բաւարարում: Բայց երբ կարգում են ԸՆԵՅՓԻԻ անգլերէն բնագրով, այլեւ ասելիք չի մնում, ու դրա կողքին մեր բազմահմուտ ու բազմակատակ Մասեհեանի փայլուն թարգմանութիւնները վերջին հաշուով մնում են թարգմանութիւն: Եւ եթէ շատերի ման ընդշխմում են ողջ հմայքն ու վեհութիւնը ռուսական բանաստեղծութեան, անցնելի են ներկայ, ապա դա շնորհիւ նրա, որ այս դէպքում թարգմանութիւնը չէ, որ կարգում են: Չունենալիք այդ հնարաւորութիւնը բնագրից հասու լինելու ռուսական բանաստեղծութեան, մեր վերաբերմունքը հանդէպ այդ բանաստեղծութեան չէր լինի աւելի, քան ասեմք, գերմանական, ֆրանսական կամ անգլիական բանաստեղծութեան հանդէպ, այսինքն ապաւինելով միայն թարգմանութեանը մենք կարող էինք դրանք անճանաչու հասկանալ ու գնահատել, բայց վերապրել իր ողջ խորութեամբ որպէս բանաստեղծութիւն, որպէս իսկական արուեստ, հնարաւոր չէր: Բանաստեղծութիւնը համամարդկային արժէք կազմող ամենափայլուն գործերն անգամ, թարգմանաբար մատուցուած, ի վիճակի չեն քրքրել, տակնուվրայ անել հոգին. դրանք մենք վերապրել կարող ենք մըտով, մտածողութեամբ: Բոլոր ոչ ֆրանսագիտերի ման մենք էլ, երեւի, Վիքթոր Գիլկոյի ընկալում ենք միայն ու միայն նրա արձակով, նրա յիշաւի կորողային, բազմաձրագրային վէպերով: Բայց ահա իրենք ֆրանսագիտներ, Վիքթոր Գիլկոյին համարում են իրենց խնդրագոյն բանաստեղծը եւ ընդունում նրան ու մեծարում ամենից առաջ որպէս այդպիսին փառք ֆրանսական բանաստեղծութեանը: Դա մեզ դժուար է հասկանալ-թարգմանական բանաստեղծութիւնը լուսագոյն դէպքում կարող է ունենալ իմացական արժէք, որը շատ քիչ է համեմատած այն բանի հետ, ինչի համար ստեղծուում է ինքը բանաստեղծութիւնը:

Արեւմուտքի ակնյայտ անտարբերութիւնն, ասեմք, ռուսական բանաստեղծութեանը, այդ թւում են Պուշկինի հանդէպ պէտք է բացատրել առաջին հերթին դրանով թարգմանութեան հետեւանքով բանաստեղծութեան հացուող անխուսափելի կորստով: Միեւնոյն ժամանակ նոյն Արեւմուտքը ոչ միայն անտարբեր է ռուսական արձակի հանդէպ, այլեւ չի պատկերացնում այսօրուան քաղաքակրթութիւնը համամարդկային կեցութիւնն առանց այդ արձակի առանց թուլւոյի, առանց Տոսթոեւսկու, առանց Չեխովի: Պատճառը հասկանալի է, արձակը պակաս խոցելի է, եւ կորուստը թարգմանելիս անհամեմատ փոքր է: Ինչքան, ինչքան փորձեր են արուել թարգմանելու, գրաբարից այսօրուան հայերէնին անցկացնելու, օրինակ, Նարեկացուն, յաջողութեան թուի պիտի դասել Մկրտիչ Ներսիսեանի թարգմանութիւնը, կատարելալ փոխի համարել, անշուշտ Վազգէ Գեղորեանի թարգմանութեանը, այստեղ թարգմանութեան ճշգրտութիւնը և հարազատութիւնը բովանդակութեան տեսակետից տարակուսանք չի յարուցում բնաւ, դա ակադեմական մակարդակ է: Բայց...

«Մատեան ողբերգութեան» մէջ, օրինակ, կայ մի այսպիսի հատուած, քսաներկու տողից բաղկացած, բոլոր տողերը սկսուած են միեւնոյն բառով «Մի...», վերջա-

նում միեւնոյն քերականական ձեւով «... այս», ու բոլոր տողերում միայն երեքական բառ է, ընդամենը 66 բառ: Դա հուժկու մի կառոյց է, կատարելալ երկնաքեր, այդ կառոյցը, ոճական այդ ձեւը, որն, ի դէպ, յատուկ է Նարեկացուն, ինքնանպատակ չէ, այն ստեղծում է հզոր հիմք բուն ասելիքը աւելի իմաստալից, աւելի ներգործուն դարձնելու միտումով: Բայց ահա թարգմանութիւնը, տողերը չեն սկսուում միեւնոյն բառով, չեն վերջանում միեւնոյն քերականական վերջաւորութեամբ, իսկ բառերի քանակը հասել է հարիւրի: Բովանդակութեան տեսակետից այդ հատուածի թարգմանութիւնն անթերի է, այն իրականացուել է ներքին զգացողութեան թելադրանքով, որը տուեալ դէպքում ճիշտ է եւ ընդունելի: Բայց ահա հատուցումը, չկայ հզոր հիմք, չկայ կորողայնութիւնը, երկնաքերը փոխարինուել է... մի քանի ցածր շէնքերով այն արդարացմամբ, որ դրանց գունարային ծաւալը հասար է երկնաքերի ծաւալին...

Իսկ մեծ հաշուով, բոլոր թարգմանութիւնների ընթացքում կորչում է (չկորչել չի կարող) Նարեկացուի հզոր պոզիայի ամենակարեւոր ու ամենակախարհիչ մասը ներքին երաժշտութիւնն ու հուժկու կշռոյթը. դրանք թարգմանելիք բաներ չեն:

Ինչ մեծ բան է շեշտադրութիւնը: Եւ ինչեր է անում այդ շեշտադրութիւնը կոչեցեալը յատկապէս մեր լեզուում հայտն լեզուում: Ես չգիտեմ, լեզուաբան չեմ, թէ ինչպիսին է վիճակը միւս լեզուներում, բայց հայերէնի շեշտադրական բազմազանութիւնն ու արտայայտչական հարստութիւնը երեւի թէ չունենայ իր նմանը. այն դարձել է մի տեսակ նոթագրութիւն օժտել բառը ցանկացած հնչեղութեամբ, ցանկացած երանգով: Արդէն պարզ է, որ Մեծն Մետրոպ Մաշտոցը օժտուած է եղել ոչ միայն նուրբ երաժշտական խողովակներով, առանց որի չէինք մեր նախնային հնչեղանային փարթամութիւնն ու հարստութիւնը, այլ նաեւ շեշտադրական միջոցների կարեւորութեան ըմբռնումով, ինչը են ի վերջոյ բերեց շեշտադրական մի ամբողջ համակարգի ստեղծմանը:

